# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 29 - 30 (16730) ՇԱԲԱԹ 13 ԱՊՐԻԼԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

## ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՕՐԻՑ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ

*Ապրիլի 9-ին Վրաստանում նշվեց Ազգային միասնության, քաղաքացիական հաշտության եւ Հայրենիքի համար զոհվածների հիշատակի 30-ամյակը, ինչպես նաեւ Վրաստանի պետական անկախության Հռչակագրի ընդունման 28-րդ տարին:*



1989 թվականի ապրիլի լույս 9-ի գիշերը խորհրդային զորքերը ցրեցին Թբիլիսիի կենտրոնում՝ խորհրդարանի շենքի դիմաց, խաղաղ բողոքի մասնակիցներին: Բռնի գործողությունների արդյունքում զոհվեց 21 մարդ, հազարավոր քաղաքացիներ թունավորվեցին խորհրդային բանակայինների կողմից կիրառված քիմիական գազերից:

Դեպքերից երկու տարի անց՝ 1991 թվականի ապրիլի 9-ին, Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց Վրաստանի անկախության հռչակագիրը:

Ապրիլի 9-ը Վրաստանի նորագույն պատմության մեջ արձանագրվեց՝ որպես ողբերգության եւ միեւնույն ժամանակ Անկախության վերականգնման օր:

Դեռ ապրիլի 8-ից եւ ողջ գիշեր մարդիկ խմբվում են խորհրդարանի շենքի առջեւ կանգնեցված Ապրիլի 9-ի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ, մոմեր վառում, ծաղիկներ խոնարհում:

Ապրիլի 9-ին երկրի անկախության համար զոհվածներին իրենց հարգանքի տուրքը մատու-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՊԱՐՏԱԴԻՐ ՔԱՅԼ՝ ԵՐԿՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱ ԷԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ՄԱՄԻԿՈՆ ՖԻԴԱՆՅԱՆԸ ԵՎ ՄԵԼՍ ԲԴՈՅԱՆԸ

*Ապրիլի 9-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, պետական արարողությունների պալատում (Ավլաբարում գտնվող Վրաստանի նախագահի նախկին նստավայրում), կազմակերպել էր ընդունելություն՝ ի պատիվ Վրաստանի ազգային միասնության օրվա:*

Ընդունելությանը ներկա էին 1989 թվականի ապրիլի 9-ին զոհվածների ընտանիքի անդամներ, Վրաստանի պետական անկախության վերականգնման հռչակագիրը ստորագրած այն տարիների Գերագույն խորհրդի պատգամավորներ: Նրանց թվում էր Նինոծմինդայից Մեծամասնական պատգամավոր, շրջանի միլիցիայի վարչության նախկին պետ Մելս Բդոյանը: Հրավիրվածների թվում էր նաեւ Վրաստանի խորհրդարանի երկու գումարումների պատգամավոր, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Նշենք, որ այն ժամանակվա Գերագույն խորհրդում էր նաեւ Ախալքալաքից մեծամասնական պատգամավոր, լուսահոգի Մամիկոն Ֆիդանյանը:

Դիմելով ներկաներին՝ Վրաստանի նախագահը նշեց, որ այսօր՝ ապրիլի 9-ին, առաջին անգամ պետական արարողությունների պալատում անցկացվում է ազգային միասնության օրվան նվիրված միջոցառում, որը խորհր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ



## ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵԹՐԻ ԽՄԲԱԳՐԻՆ

*Ապրիլի 11-ին Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին հանդիպեց «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի հետ:*

Հանդիպմանը «Վրաստան» թերթի խմբագիրը կրթության եւ գիտության նախարարին ծանոթացրեց Թբիլիսիից, Սամցխե-Ջավախեթիից, Քվեմո Քարթլիից, Բաթումիից եւ այլ վայրերից ստացվող թերթի ընթերցողների նամակներին, որտեղ նրանք իրենց դիտողություններն ու կարծիքն են հայտնում Վրաստանում հայկական դպրոցների գործունեության, կրթօջախները չափորոշիչներին համապատասխանող դասագրքերի ապահովման, հայկական դպրոցների համար ուսումնական ձեռնարկների թարգմանությունների մակարդակի բարձրացման, եւ, մասնավորապես, պետական լեզվի հիմնարար ուսուցման ու հայկական եւ վրացական միջդպրոցական փոխշփումների ակտիվացման մասին:

Անդրադառնալով մշակույթի թեմային՝ Միխեիլ Բատիաշվիլին հավաստեց, որ Թբիլիսիում Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շինարարությունն ընթանում է ժամանակացույցի գերազանցմամբ, եւ շատ հնարավոր է, որ մշակութային օբյեկտը շահագործման հանձնվի ծրագրված ժամկետից շուտ:

Նախարարը գոհունակություն հայտնեց թերթի ընթերցողների ցուցաբերած ակտիվության համար եւ նշեց, որ նամակներում բարձրացված հարցերը նկատի կառնվեն նախարարության գործունեության մեջ:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ»

### ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԿԵՐՎՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 11-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես եկավ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստաշրջանի լիագումար նիստում:*




Խոսելով հարեւան երկրների հետ հարաբերությունների մասին՝ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետությունն իր հարեւանների հետ հարաբերությունները պատկերացնում է խաղաղության օրակարգի շրջանակներում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## «ԵՍ ՎՐԱՑԻ ԵՄ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ՝ ԵՎՐՈՊԱՑԻ»

### ԶՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱՅԻ ԱՍՏՂԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱԼԱՏԻ ԱՌՋԵՎ

*Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստարջանին մասնակցելու համար, աշխատանքային այցով Ստրասբուրգում էր Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն:*



Նա ելույթ ունեցավ խորհրդի լիագումար նիստում, մասնակցեց Եվրոպայի խորհրդի պալատի առջեւ Զուրաբ Ժվանիայի աստղի բացման արարողությանը, անցկացրեց մի շարք հանդիպումներ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Տորբյորն Յագլանդի հետ:

Իր խոսքում, վարչապետը խոսեց եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի կողմից իրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 14-Ը ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐՆ Է

## ԱԶԳԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ



Ապրիլի 14-ին, Վրաստանը նշում է «Վրաց լեզվի օրը, ազգի միասնության խորհրդանիշը:

1978 թվականի ապրիլի 14-ին Վրաստանի բնակչությունը հակադրվեց Վրաստանում վրացերենի՝ որպես պետական լեզվի կարգավիճակը վերացնելու մասին Խորհրդային Միության որոշմանը:

Այդ օրվանից ապրիլի 14-ը հայտարարվեց Վրաց լեզվի օր, եւ օրվա առիթով Քուռ գետի աջափնյակում տեղադրված Վրաց լեզվի հուշարձանի մոտ անցկացվում են ավանդական միջոցառումներ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՅՑԵԼԻ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ

*Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, «Մայրենի լեզվի» օրվա առիթով, ապրիլի 13-14-ը կլինի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում:*

Վրաստանի նախագահը Ախալքալաքիում, տոնական պայմաններում, բացելու է վրացական այբուբենով նկարազարդված պատը եւ տեղի բնակչությանը դիմելու է խոսքով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 9-Ը` ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՊԱՐՏԱԴԻՐ ՔԱՅԼ` ԵՐԿՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՃՏԵՑՄԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

(Սկիզբը` 1-ին էջում)

դանշական նշանակություն ունի:

- Այսօր այստեղ են 1989 թվականի ապրիլի 9-ին զոհվածների ընտանիքների անդամներն ու այն տարիների Գերագույն խորհրդի անդամները, ովքեր բացեցին երկրի անկախության դարպասները` ստորագրելով անկախության վերականգնման հռչակագիրը: Այսօր այստեղ պարտադիր քայլ է արվում երկրի եւ հասարակության հաշտեցման եւ միավորման ուղղությամբ,- հայտարարեց վարչապետը:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Մայա Ցքիտիշվիլին, Վրաստանի պետական անկախության հռչակագիրը ստորագրած Դմիտրի Քեբուրիան, Իգոր Չխեիձեն եւ Ջվիադ Ձիձիգուրին:

*Լուսանկարը`*
*ԳԻՈՐԳԻ ԱԲԴԱԼԱՁԵԻ*



Մելս Բդոյանը եւ Գերագույն խորհրդի նախագահ Ակակի Ասաթիանին

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## «ԵՍ ՎՐԱՑԻ ԵՄ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ` ԵՎՐՈՊԱՑԻ»

(Սկիզբը` 1-ին էջում)

կանացված բարեփոխումների, երկրի տարածքային ամբողջականության վերականգնմանն ուղղված Վրաստանի կառավարության խաղաղասիրական նախաձեռնությունների, ժողովրդավարական ինստիտուտների ամրացման ուղղությամբ իրականացվող քայլերի մասին:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար, Տորբյորն Յագլանդի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Եվրախորհրդի համատեղ հետաքրքրություններին գոյություն ունեցող հարցեր եւ երկրում ընթացող բարեփոխումներին առնչվող հարցեր:

Նշվեց, որ 2019 թվականը հոբելյանական է, ինչպես Եվրախորհրդի համար, որի հիմնադրումից անցել է 70 տարի, այնպես էլ` Վրաստանի համար, որը նշում է կազմակերպությանը անդամագրվելու 20-ամյակը: Ուշադրություն դարձվեց նաեւ վերջին տարիներին ինտենսիվ համագործակցության կոնկրետ արդյունքներին:



Այցի շրջանակներում, Մամուկա Բախտաձեն մասնակցեց Եվրոպայի խորհրդի պալատի առջեւ Վրաստանի խորհրդարանի նախկին նախագահի, վարչապետ, Եվրամիության հետ հարաբերությունների հաստատման նախաձեռնողներից մեկի` Զուրաբ Ժվանիայի աստղի բացման արարողությանը: Աստղի վրա, Զուրաբ Ժվանիայի անուն եւ ազգանունից բացի, գրված է նրա ամենահայտնի արտահայտություններից մեկը ` «Ես վրացի եմ, համապատասխանաբար` եվրոպացի»:

Այս նախադասությունը Զուրաբ Ժվանիան հնչեցրել է 20 տարի առաջ, հենց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նիստին, նրանից հետո, երբ վեհաժողովը միաձայն աջակցել է Վրաստանի անդամակցությանը Եվրախորհրդին:

Արարողությանը ներկա էին նաեւ նրա ընտանիքի անդամները:

- Այսօր, 20 տարի անց, ցանկանում եմ կրկնել նրա խոսքերը` «Ես վրացի եմ, համապատասխանաբար` եվրոպացի» ,- հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն ինչպես Եվրոպայի խորհրդի Խորհրդարանային վեհաժողովի նիստին, այնպես էլ աստղի բացման արարողությանը:

- 20 տարի առաջ` 1999 թվականի ապրիլի 27-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիան ելույթ է ունեցել այս հիանալի դահլիճում: Այդ պատմական օրվանից անցել է 20 տարի, եւ խորհրդանշական է, որ մենք ստանձնել ենք Եվրախորհրդի նախագահությունը: Այն կազմակերպության նախագահությունը, որը մեր ճանապարհի հիմնական աջակցողն է, եւ այժմ մեր հերթն է ընդունենք Եվրախորհրդի ջահը եւ այն փոխանցենք մեր ապագա սերնդին,- հայտարարել է Մամուկա Բախտաձեն:

## ՖԵԴԵՐԻԿԱ ՄՈԳԵՐԻՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է»

***Եվրամիության արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին, հանդես գալով Լյուքսեմբուրգում Եվրամիության արտաքին գործերի նախարարների մինիստերիալի բացմանը, հայտարարեց, որ Վրաստանի եւ Եվրամիության համագործակցությունը հաջողության պատմություն է:***

Մոգերինիի խոսքով, Եվրամիության անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները այսօրվա հանդիպմանը զրուցելու են «արեւելյան գործընկերության» անդամ երկրների հետ համագործակցության մասին, ինչպես նաեւ քննարկելու են ծրագրի 10-ամյա հոբելյանի նախապատրաստական աշխատանքներին վերաբերող հարցեր:

- Վրաստանի հետ ունենք փայլուն գործընկերություն եւ համագործակցություն: Այս մասին հնարավորություն ենք ունեցել զրուցել Լյուքսեմբուրգում, որտեղ հանդիպել ենք Վրաստանի կառավարության անդամների հետ: Վրաստանի եւ Եվրամիության գործընկերությունը իսկապես հաջողության պատմություն է, որը շարունակվելու է ապագայում,- հայտարարեց Ֆեդերիկա Մոգերինին:

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ 600 ՀԱԶԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ

***Ուղիղ երկու տարի առաջ` մարտի 28-ին, Եվրոպան իր դռները բացեց Վրաստանի քաղաքացիների առջեւ: Ուժի մեջ մտավ ԵՄ-Վրաստան վիզայի ազատականացման մասին համաձայնագիրը, ինչը թույլ տվեց Վրաստանի քաղաքացիներին, առանց մուտքի արտոնագրի, այցելել Շենգենյան գոտու երկրներ:***

Երկու տարի առաջ, այդ օրը առանց մուտքի արտոնագրի առաջին ուղեւորը Վրաստանի նախկին վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին էր:

Այդ իրավունքից առ այսօր օգտվել է Վրաստանի ավելի քան 600 հազար քաղաքացի: Երկու տարի անց, սակայն, հարցը կրկին արդիական է: Հիմնական մարտահրավերը առանց վիզայի ռեժիմի հնարավոր դադարեցումն է, քանի որ Եվրամիության մի շարք երկրներում ապաստան խնդրողների թիվը տարեցտարի աճում է:

2019 թվականին ապաստան է խնդրել Վրաստանի 2412 քաղաքացի: Վերջին 12 ամիսների ընթացքում եվրոպական երկրներում ապաստան է խնդրել Վրաստանի 17 980 քաղաքացի:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՃԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՃՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ապրիլի 11-ին Վրաստանի պետական լեզվի դեպարտամենտի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանի հետ: Հանդիպմանը մասնակցեց նաեւ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Ջերմ, բարեկամական մթնոլորտում կայացած հանդիպման նպատակը պետական լեզվի պաշտպանության քաղաքականության հարցով փորձի փոխանակումն էր: Կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանի եւ Հայաստանի պետական լեզվի պահպանության հարցերով զբաղվող համապատասխան գերատեսչությունների միջեւ համագործակցության հեռանկարների մասին:

*Լուսանկարը`*
*ՔԵԹԵՎԱՆ ՄՃԵԴԼԻՇՎԻԼՈՒ*



Ձախից` Դավիթ Գյուրջինյանը եւ Գիորգի Ալիբեգաշվիլին



### ՈՒԿՐԱԻՆԱ
### ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ` ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

*Ուկրաինայի կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախագահի թեկնածուներին թույլատրել է ապրիլի 8-ից քարոզարշավ ծավալել ընտրությունների երկրորդ փուլից առաջ, որը կկայանա ապրիլի 21-ին: Քարոզչությունը թույլատրված է մինչեւ ապրիլի 19-ը ներառյալ:*

*Հիշեցնենք, որ ընտրությունների` մարտի 31-ին կայացած առաջին փուլի ընթացքում, շոումեն Վլադիմիր Զելենսկին հավաքել է ձայների 30,24 տոկոսը, Ուկրաինայի գործող նախագահ Պյոտր Պորոշենկոն` 15,95 տոկոսը: Մինչեւ ապրիլի 21-ը պետության ղեկավարի պաշտոնի երկու թեկնածուները պարտավոր են իրենց ներկայացուցիչների թեկնածությունները ներկայացնել նորացված տարածքային հանձնաժողովներում: Տարածքային հանձնաժողովներն իրենց հերթին հաստատում են տեղամասային ընտրական հանձնաժողովների նոր կազմը եւ անմիջական ձեռնամուխ լինում ընտրությունների երկրորդ փուլի նախապատրաստմանը:*

### ԹՈՒՐՔԻԱ
### ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՍՏԱՄԲՈՒԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՄԱՆ ՊԱՀԱՆՋ

*Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պահանջում է չեղարկել Ստամբուլում քաղաքապետի ընտրությունների արդյունքները:*

*Ինչպես հայտարարում է Էրդողանը, օրենքի համաձայն, ընտրատեղամասերի մոտ պետք է աշխատեն միայն պետական աշխատողներ, սակայն որոշ ընտրատեղամասերում այս կարգը չի պահպանվել:*

*Հիշեցնենք, որ Թուրքիայում մունիցիպալ ընտրությունները տեղի են ունեցել մարտի 31-ին: Ստամբուլի քաղաքապետ է ընտրվել «Ժողովրդական դեմոկրատական կուսակցության» թեկնածու Էկրեմ Իմամօղլուն: Նա նախկին վարչապետ Բինալի Իլդիրիմին հաղթել է 15 000 ձայնով: Անկարայում եւ Իզմիրում հաղթել են ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները:*

*Ապրիլի 9-ին իշխող կուսակցությունը դիմել է Թուրքիայի Գերագույն խորհրդին եւ պահանջել ընտրությունների կրկնակի անցկացում:*

### ԻՍՐԱՅԵԼ
### ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի «Լիկուդ» կուսակցությունը, ապրիլի 9-ին կայացած խորհրդարանական ընտրություններում բոլոր ձայների հաշվումից հետո, 36 տեղ է ստանում 120 տեղանոց Կնեսետում: «Լիկուդ»-ի գլխավոր մրցակիցը` գլխավոր շտաբի նախկին պետ Բենի Գանցիի «Կահոլ-Լավան» կենտրոնամետ դաշինքն ստանում է 35 մանդատ:*

*ՇԱՍ եւ «Յահադուտա խա-Տորա» կրոնական կուսակցությունները խորհրդարանում ստանում են ութ եւ յոթ տեղ, «Ավոդա» ձախ կուսակցությունը` վեց տեղ, պաշտպանության նախկին նախարար Ավիգդոր Լիբերմանի «Մեր տունը Իսրայելն է» կազմակերպությունն ստանում է հինգ տեղ, նույնքան էլ բաժին է հասնում «Աջ կուսակցությունների միություն» դաշինքին: Այսպիսով, ապագա աջ կառավարությունն ստանում է 65 մանդատ:*

*Ընտրություններին մասնակցությունը կազմել է 68,38 տոկոս, քվեարկել է ավելի քան 4,3 մլն իսրայելցի` ձայնի իրավունք ունեցող ավելի քան 6 մլն ընտրողներից:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՊՐԻԼԻ 14-Ը ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐՆ Է

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՅՑԵԼԻ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Մայրենի լեզվի» օրվա առիթով Սալոմե Զուրաբիշվիլին պարգեւատրելու է Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի գերազանց շրջանավարտներին եւ հայտարարելու՝ մրցույթում հաղթող դպրոցի աշակերտներին:

Վրաստանի նախագահը շրջանների հզորացմանը նպաստելու եւ վրացական արտադրանքին աջակցելու նպատակով կայցելի Սամցխե-Ջավախեթիում գործող ընկերություններ եւ կհանդիպի՝ «Արտադրիր Վրաստանում» պետական ծրագրին ներգրավված ձեռնարկատերերին:

Տարածաշրջանում նախատեսված են հանդիպումներ տեղի բնակչության հետ:

ՆՈՐ ՕԲՅԵԿՏ

## ԿՈՎԿԱՍԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Ապրիլի 12-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն Թբիլիսիում մասնակցեց Կովկասում խոշորագույն բազմաֆունկցիոնալ «Մեգալաբ» լաբորատորիայի բացման արարողությանը:*



Իր խոսքում, վարչապետն ընդգծեց լաբորատորիայի կարեւորությունը եւ այն հնարավորությունները, որոնք երկրում կարող են ծագել լաբորատորիայի գործունեության ընթացքում:

Ինչպես նշեցին լաբորատորիայի հիմնադիրները, օբյեկտը հնարավորություն ունի տարեկան 6 միլիոն թեստ անցկացնել: Լաբորատորիան հագեցված է բժշկական նորագույն տեխնիկայով, եւ ախտորոշումն ապահովում է առավելագույն հստակությամբ:

«Մեգալաբ» լաբորատորիան իրականացնում է մոլեկուլյալ, գենետիկ եւ միկրոկենսաբանական հետազոտություններ: Այն ի վիճակի է միաժամանակ մեկ ժամվա ընթացքում անցկացնել ավելի քան 2 հազար թեստ:

«Մեգալաբ» լաբորատորիայի նախագծի իրականացման համար «Վրաստանի առողջապահության խումբը» ներդրել է 20 միլիոն լարի:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ «ԳԱԶՊՐՈՄԻ» ՀԵՏ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԿԳՆՎԻ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԳԱԶ

*Ինչպես տեղեկացրեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Քոբուլիան, Վրաստանը «Գազպրոմ»-ի հետ պայմանավորվել է քիչ քանակությամբ գազի գնման շուրջ, թեպետ նախարարը խուսափեց պայմանավորվածությունների կոնկրետ պարամետրերի ճշտումից:*

- «Գազպրոմ»-ի հետ պայմանագիրն արդեն ձեւակերպված է, եւ մենք Ռուսաստանից գազ ենք գնելու փոքր քանակություններով,-հայտարարեց էկոնոմիկայի նախարարը:

Նշենք, որ Գիորգի Քոբուլիան դեռեւս ընթացիկ տարվա փետրվարին էր հայտարարել, որ երկիրը պատրաստվում է գազ գնել Ռուսաստանից: Այն ժամանակ նա դա բացատրել էր երկնագույն վառելիքի մատակարարումների դիվերսիֆիկացման անհրաժեշտությամբ:

Վրաստանը բնական գազի իր պահանջարկը բավարարում է հիմնականում ներմուծման հաշվին: Գազի գրեթե ամբողջ անհրաժեշտ ծավալը երկիրն ստանում է Ադրբեջանից: Վրաստանը Ռուսաստանից գազ չէր գնում 2006 թվականից:

Երկիրը միայն ստանում է Հայաստան ռուսական գազի տարանցման ընդհանուր ծավալի 10 տոկոսը:

Արդեն 2017 թվականից ՌԴ-ն Վրաստանին այդ տարանցման դիմաց վճարում էր փողով եւ մասամբ հումքով, իսկ 2018 թվականին՝ միայն փողով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՐԿՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՎՐԱՍՏԱՆԻՆ



*Վրաստանի բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջության եւ սոցիալական պաշտպանության նախարարության պատվիրակությունը Ավստրիայում, լյարդն ուսումնասիրող Եվրոպայի միության եւ Լյարդի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված կոնգրեսին ներկա է պատվավոր հյուրի կարգավիճակով:*

Առողջապահության նախարարության տեղեկությամբ, կոնգրեսի շրջանակներում, նստաշրջանը նվիրվել է հեպատիտի վերացման ուղղությամբ Վրաստանի ձեռքբերումներին: Նստաշրջանին Վրաստանին շնորհվել է աշխարհում առաջին «Հեպատիտի դեմ պայքարի օրինակելի երկրի» կարգավիճակը:

Նշված պատվավորի տիտղոսը Վրաստանի օկուպացված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոյին փոխանցել է լյարդն ուսումնասիրող Եվրոպայի միության նախագահ Մասիմո Կոլոմբոն:

Լյարդի միջազգային համաժողովը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում բացվել է ապրիլի 10-ին եւ ավարտվելու է ապրիլի 14-ին: Համաժողովի շրջանակներում, լյարդի հիվանդությունների միջազգային հիմնադրամի եւ Վրաստանի օկուպացված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր:

ԴԻՔՈՐՈՇՈՒՄ

## **ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ.** «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՁԵՎԱՎՈՐՎԵԼ, ԹԵԵՎ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐ ԿԱՆ»

*Վրաստանի նախկին վարչապետ, «Վրացական երազանք» կառավարող կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին «Իմեդի» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում խոստովանեց, որ իր գլխավորած թիմը դեռեւս հղկված չէ, եւ ինքը ստիպված բավականին ժամանակ աշխատում է խորհրդարանական մեծամասնության հետ:*



Նրա հավաստմամբ, կառավարությունը հաջող է ձեւավորվել, թեեւ որոշ հարցեր կան՝ ուղղված առանձին նախարարներին:

Անդրադառնալով 2020 թվականի ընտրությունների թեմային՝ Բիձինա Իվանիշվիլին վստահություն հայտնեց, որ դրանցում իրենք կհասնեն հաջողության:

- Կարծում եմ, ընտրություններում «Վրացական երազանքի» հաղթանակի հարցում կասկածներ չկան, սակայն դա կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ «Վրացական երազանքը», իրոք, հաղթի այդ ընտրություններում,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ լրատվամիջոցներն իրենց հրապարակումներով բացասական ազդեցություն են գործում հասարակության վրա:



### ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏՈՂ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄԸ ԿՊԱՏԺՎԻ

*Ապրիլի 8-ին Վրաստանի խորհրդարանի բյուրո ներկայացվեց Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը: Այն վերաբերում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը խախտող քարտեզների տարածմանը: Այսուհետ, օրենքը խախտողները կկրեն ոչ միայն քրեական, այլեւ վարչական պատասխանատվություն՝ կտուգանվեն:*

*Ըստ օրինագծի, Վրաստանի տարածքային ամբողջականության խախտումով կազմված քարտեզի տպագիր հրատարակումը, կամ նման պատկերներ ունեցող այլ առարկայի պատրաստումը, տարածումը, գովազդումը, իրացումը, Վրաստան ներմուծելն ու արտահանելը կպատժվի 2000 լարի տուգանքով կամ մինչեւ 2 տարվա ազատազրկում:*

### ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Իտալիայի կառավարությունը Վրաստանին 2 միլիոն եվրո է հատկացրել:*

*Գումարը տրամադրվել է մթնոլորտում օդի որակին հետեւելու նոր կայաններ ձեռք բերելու եւ Թբիլիսիում բնական աղետների ռիսկերն ուսումնասիրելու համար: Այս մասին որոշումը կայացվել է Վրաստանի շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչների եւ իտալացի փորձագետների խմբի անդամների հետ հանդիպման ժամանակ:*

### ԹՈՂԵԼ ԵՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ»

*Թբիլիսիի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորներ Վատո Շաքարաշվիլին եւ Զաբա Ջիշկարիանին հայտարարեցին «Վրացական երազանք» կուսակցությունից հեռանալու մասին:*

*Մեկնաբանելով կառավարող կուսակցությունից նրանց հեռանալու մասին հայտարարությունը՝ Վրաստանի խորհրդարանի մեծամասնության անդամ Մամուկա Մդինարաձեն հայտարարեց, որ սա «Վրացական երազանքի» պառակտման գործընթաց չէ, եւ որ գործընթացը կավարտվի ընդամենը մի քանի մարդու հեռանալով:*

*- Սա նույն գործընթացն է, ինչ եղավ խորհրդարանում ու կսահմանափակվի՝ միայն մի քանի մարդու հեռանալով: Ֆեյսբուքյան բազմաթիվ գրառումներ տեսանք Շաքարիշվիլու ձեռամբ եւ արդեն վաղուց պարզ էր, որ այս մարդը չէր կարող լինել «Վրացական երազանքի» անդամ,- հայտարարեց Մդինարաձեն:*

### ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՐՏՈՖԻԼԸ ԹԱՆԿԱՑԵԼ Է

*Տեղական շուկայում կարտոֆիլի գինը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրեթե կրկնապատկվել է:*

*Թբիլիսիի ագրարային շուկայի վաճառականները «Բիզնեսպրեսնյուսին» տված հարցազրույցում՝ որպես գնաճի պատճառ, նշել են Թուրքիայից ապրանքի ներմուծման նվազումը, ինչի հետեւանքով, տեղի արտադրողները գները բարձրացրել են:*

*Մեկ կիլոգրամ միջին կարտոֆիլը, որը մեկ ամիս առաջ արժեր 40-50 թեթրի, այժմ կազմում է 70-80 թեթրի, իսկ համեմատաբար լավ որակի կարտոֆիլը 1 լարիից հասել է 1,70-2 լարի:*

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

# ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՕՐԻՑ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



ցեցին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, Վաստանում հավատարմագված դիվանագիտական կորպուսի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

### «ՄԵՐ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Ապրիլի 9-ի զոհերի հիշատակը հարգելու համար, Ռուսթավելու պողոտա եկավ եւ հուշակոթողին ծաղիկներ խոնարհեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

- Մեր ցավակցությունն ու աջակցությունն ենք հայտնում վրաց ժողովրդին, վրաց ազգին,- ասաց Հայաստանի դեսպանը:



* * *

Թբիլիսիի սակրեբուլոյի անվանումների եւ խորհրդանիշների հանձնաժողովի նախաձեռնությամբ, որոշում ընդունվեց մայրաքաղաքում թվով 6 փողոցների, ապրիլի 9-ին զոհված կանանց անուններով անվանակոչելու մասին հանրային քննարկում անցկացնելու վերաբերյալ:

### «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍՎԵՑ ԱՊՐԻԼԻ 9-ԻՑ»

Ապրիլի 9-ին Ռուսթավելու պողոտայում տեղադրված հուշակոթողին ծաղիկներ խոնարհեցին Վիրահայ համայնքի ներկայացուցիչները: Վրաստանում լայնորեն ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ, երկրի օրենսդիր մարմնի երկու գումարումների պատգամավոր, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Ապրիլի 9-ի զոհերի հուշակոթողի մոտ, «Ալիք մեդիային» տված հարցազրույցում նշեց, որ Վրաստանի, Հայաստանի, ինչպես նաեւ խորհրդային մյուս երկրների անկախությունը մեկնարկել է հենց Թբիլիսիում ապրիլի 9-ին:

- Նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունը սկիզբ առավ Թբիլիսիից՝ ապրիլի 9-ին: Դա վկայում էր, որ մեր երկրներն անկախ են, որդեգրվում են ժողովրդավարական ուղուն: Որոշ երկրներ արդեն մեծ զարգացումներ են արձանագրել, մյուսները դեռ աշխատում են այդ ուղղությամբ,- ասաց Վան Բայբուրթյանն՝ ընդգծելով, որ այլ ուղի չկա, քանի որ ռուսական տանկերի առջեւ անվախ ու ազատության համար կանգնած քաղաքացիների կամքն անկոտրում է:

Նրա խոսքով, փորձագետներն ու պատմաբանները, վերլուծելով 30 տարի առաջ տեղի ունեցած դեպքերը, նշում են, որ անկախության գործընթացը սկսվել է 1958-1959 թվականներին, երբ Խրուշչովը քննադատեց Ստալինին:

- Առաջին անգամ վերջին 200 տարվա ընթացքում ե'ւ Վրաստանը, ե'ւ Հայաստանը 30 տարի շարունակ ապրում են անկախ, ժողովրդավարական երկրներում: Այսպիսի միջոցառումներին պետք է մշտապես մասնակցել, ծաղիկներ խոնարհել եւ հիշել նրանց, ովքեր եկան այստեղ՝ տանկերի առջեւ խաղաղ, առանց զենքի, իրենց պահանջները բարձրաձայնելու,- նշեց Վան Բայբուրթյանը:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

# ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ

*Ապրիլի 10-ին Թբիլիսիում առաջին անգամ անցկացվեց երջանկահիշատակ բանաստեղծուհի, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի անվան մրցանակաբաշխության արարողությունը: Այն նախաձեռնել եւ կազմակերպել էր բանաստեղծուհու հիմնադրած եւ նրա դուստրեր Գայանե եւ Մարինե Բոստանջյանների կողմից այդ գործունեությունը շարունակող «Կամուրջ» հասարակական կազմակերպությունը:*



Մրցույթին մասնակցում էին Թբիլիսիի թիվ, թիվ 104, 103 հանրային դպրոցների բարձր դասարանների աշակերտներ: Ազատ ժանրի գրավոր շարադրանքների թեման «Հայ-վրացական հարաբերություններ»-ն էին: Մրցույթի լեզուն հայերենն ու վրացերենն էր, ըստ այդմ հռչակվեց երկու հաղթող՝ հայագիր՝ թիվ 104 դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Ազա Մուրադյան (ուսուցչուհի՝ Կարինե Հովհաննիսյան) եւ վրացագիր՝ թիվ 103 դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Ժանետա Բաղդասարյան (ուսուցչուհի՝ Նինո Օրթավիձե): Մրցանակաբաշխության հաղթողների ընտրության իրավունքը վերապահվել էր Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլուն եւ Երեւանից ժամանած, Հայաստանի կրթության ու գիտության նախարարության Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանին:

Հանդիսավոր արարողությունը կայացավ «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում, բացվեց Անահիտ Բոստանջյանի գրական գործունեության, հայ-վրացական մշակութային կապերի զարգացման ու փոխճանաչելիության խորացման մեջ նրա ներդրած ավանդի մասին, վարում էին լրագրող Լիզա Թորոսյանը եւ բանաստեղծ Լեւան Ծալուղելաշվիլին:

Հայտնելով իր շարունակական աջակցությունը մրցույթին՝ Դավիթ Գյուրջինյանը, կոչելով հայոց լեզվի անաղարտության պահպանումը, կարեւորեց պետական լեզվի իմացությունը՝ համարելով դա Վրաստանի հայազգի քաղաքացիների պարտականությունը, իսկ Մաղվալա Գոնաշվիլին իր խոսքում բարձր գնահատեց Անահիտ Բոստանջյանի զուլալ սերն ու նվիրումը հայ-վրացական գրական կապերի զարգացման գործին, ափսոսանքով փաստելով նրա անփոխարինելիությունը:

Միջոցառման գաղափարը ողջունեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը ողջունեց Անահիտ Բոստանջյանի անվան մրցանակաբաշխության գաղափարը եւ հայտնեց Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությունըմիջոցառման հետագա իրականացման արդեն Վրաստանի հայաբնակ տարածաշրջաններում: Ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ում միջոցառման ընթացքում Մաղվալա Գոնաշվիլին փոխանցեց ՎԳՄ ժողովուրդների բարեկամության դեսպանի պատվոգիրը:

Բացի հաղթողներից, մրցույթին մասնակից աշակերտներին տարբեր անվանակարգերում մրցանակները փոխանցեցին «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրացահայերի միության նախագահ Մարի Առաքելովան, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը:

«Կամուրջ» ՀԿ նախագահ Գայանե Բոստանջյանը ներկաներին հավաստիացրեց, որ մրցույթը կրելու է շարունակական բնույթ՝ ընդգրկելով երկրի տարբեր հայաբնակ տարածաշրջաններ:

Միջոցառումը հագեցած էր նաեւ գեղեցիկ երգերով եւ ասմունքով, որ ներկայացրեցին Անի Թորոսյանը, Աննա Բադալյանը, դպրոցականներ:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

ԿՐԹԱԿԱՆ

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՕԵՆՔԸ

*Ապրիլի 8-ին Վրաստանի խորհրդարանը՝ 80 կողմ եւ 8 դեմ ձայներով, ընդունեց դպրոցների 11-րդ եւ 12-րդ դասարանների աշակերտների ավարտական քննությունների վերացման մասին կառավարության օրենսդրական նախաձեռնությունը:*

Օրինագիծը խորհրդարանի արտահերթ նիստին քվեարկության է դուրս բերվել երկրորդ անգամ, քանի որ ապրիլի 5-ի նիստին չի ստացել համապատասխան ձայներ, եւ քվեարկությունը տապալվել է:

Կառավարող թիմը այդ ամենը կապել է տեխնիկական հիմնախնդիրների հետ:

Օրենքի համաձայն, վերացվում են դպրոցի ավարտական քննությունները: Բացի այդ, դպրոցի ավարտական քննությունները հանձնելուց ազատվում են անձինք, ովքեր չեն կարողացել վերցնել լրիվ ընդհանուր կրթության վկայական: Կոնկրետ խոսքը վերաբերում է անձանց, ովքեր մինչեւ 2018-2019 ուստարին հաղթահարել են ընդհանուր կրթության միջին աստիճանը եւ չեն մասնակցել դպրոցի ավարտական քննություններին: Ինչպես նաեւ այն անձանց, ովքեր մինչեւ 2018-2019 կրթական տարին հաղթահարել են ընդհանուր կրթության միջին աստիճանը եւ մասնակցել ավարտական քննություններին, սակայն ատեստատի համար բավարար միավորներ չեն հավաքել:

«Ընդհանուր կրթության մասին» օրենքում փոփոխություններն ուժի մեջ կմտնեն նրանից հետո, երբ ուղղումները կիրապարակվեն «Վրաստանի օրենսդրական լրաբերի» կայքում:

# ՀԱՅՏՆԻ ԵՆ ԲՈՒՀԵՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

*2019 թվականի միասնական ազգային քննությունների յուրաքանչյուր առարկայի համար որոշվել է անցումային բալը եւ քննության տեւողությունը:*

Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տեղեկատվությամբ, ըստ առարկաների նվազագույն/առավելագույն միավորները եւ քննությունների տեւողությունը հետեւյալն է՝

* Վրաց լեզու եւ գրականություն - առավելագույն բալը՝ 70, նվազագույն անցողիկ բալը՝ 18, տեւողությունը՝ 3 ժամ 45 րոպե.

* Ընհանուր ունակություններ - առավելագույն բալը՝ 80, նվազագույն անցողիկ բալը՝ 24, տեւողությունը՝ 3 ժամ 10 րոպե.

* Օտար լեզուներ - առավելագույն բալը՝ 80, նվազագույն անցողիկ բալը՝ 17, տեւողությունը՝ 2 ժամ 30 րոպե.

* Գրականություն - առավելագույն բալը՝ 70, նվազագույն անցողիկ բալը՝ 18, տեւողությունը՝ 4 ժամ.

* Մաթեմատիկա - առավելագույն բալը՝ 59, նվազագույն անցողիկ բալը՝ 15, տեւողությունը՝ 3 ժամ 40 րոպե.

* Պատմություն - առավելագույն բալը՝ 70, նվազագույն անցողիկ բալը՝ 18, տեւողությունը՝ 2 ժամ 40 րոպե.

* Աշխարհագրություն - առավելագույն բալը՝ 60, նվազագույն անցողիկ բալը՝ 16, տեւողությունը՝ 2 ժամ 40 րոպե.

* Կենսաբանություն - առավելագույն բալը՝ 70, նվազագույն անցողիկ բալը՝ 18, տեւողությունը՝ 2 ժամ 30 րոպե.

* Քիմիա - առավելագույն բալը՝ 75, նվազագույն անցողիկ բալը՝ 19, տեւողությունը՝ 2 ժամ 40 րոպե.

* Ֆիզիկա - առավելագույն բալը՝ 75, նվազագույն անցողիկ բալը՝ 19, տեւողությունը՝ 2 ժամ 40 րոպե: